Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Խոսքային հաղորդակցում

Ուսուցիչ՝ Մարգարիտ Անանյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն_____2

Ներածություն_____3-7

Խոսքային հաղորդակցում_____8-19

Եզրակացություն_____20

Գրականության ցանկ_____21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հասարակության մեջ խոսքային (վերբալ) հաղորդակցման ձևերը խիստ կարևոր են, քանի որ դրանք ապահովում են տվյալ հասարակության անդամների (սոցիալտարիքային և սեռային տարբեր խմբերի) փոխադարձ շփումները: Դրանք նաև ժամանակի հոլովույթի մեջ փոփոխական են, քանի որ շարունակաբար կորցնում են մեկ ձև և իմաստ, ձեռք բերելով մեկ ուրիշը՝ պայմանավորված մի շարք գործոններով, ինչպես մտածողության որոշակի դրսևորում, միջավայրի (այդ թվում և այլէթնիկ) ազդեցություն և այլն: Այս առումով խոսքային հաղորդակցության համակարգը (մասնավորապես դիմելաձևերը) խիստ դինամիկ է:

Նիկոլ Մարգարյանի դիպուկ բնութագրմամբ, խոսքային դիմելաձևեր ասելով նկատի են առնվում բոլոր այն վերբալ ձևերը, որ իմաստավորված են բառի մեջ (անձնանուններ, մականուններ, ազգակցական տերմիններ, զբաղմունքի և տիտղո-սանուններ) կամ ածական-կոչականներ ու դիմող բացականչություններ (1):

Դիմելաձևերը տարբերվում են պաշտոնական և առօրյա մակարդակներով, ճանաչելիության աստիճանով, սեռատարիքային չափանիշով: Սեռա-տարիքային չափանիշով տարբերվող դիմելաձևերը վկայում են և դիմողի սոցիալ-խավային ծագման, կամ պատկանելության կրթական մակարդակի, միջավայրի ու դաստիարակության մասին: Կան նաև կլանային փակ խմբերի դիմելաձևեր, որոնք խիստ սահմանափակ են, ինչպես օրինակ հանցագործների միջավայրում և ճանաչելի միայն կոնկրետ միջավայրում: Դրանք այսպես կոչված «գողական անուններն են», որոնք չեն ունենում կրկնօրինակներ՝ շնորհիվ հարադիր անուններ (տեղանուններ, բնակության վայրի կոնկրետացում, ֆիզիկական որևէ հատկանիշ ընդգծող անվանումներ և այլն /ինչպես օրինակ՝ Դքի Նորո/):

Առաջին խումբ են ներկայացնում և ֆիզիկական հատկանիշներ բնորոշող հատուկ անունները, որոնք օգտագործվում են կոնկրետ անձի նկատմամբ, ինչպես օրինակ Կյաժ, Սևո», Չան, Բոյլուխ, Պստո և նման բազմաթիվ անվանումներ, որոնք

առավելապես հանդիպում են տղամարդկանց միջավայրիում՝ փակցվում մարդուն ողջ կյանքի ընթացքում և ճանաչելի դարձնում վերջինիս կոնկրետ իր միջավայրում:

Պաշտոնական դիմելաձևը (հիմնարկներում, բուհերում) տղամարդկանց դեպքում՝ պարոն, կանանց դեպքում տիկինն է: Թեպետև այստեղ պետք է վերապահումով մոտենալ, քանի որ բուհական համակարգում ուսանողությունը գերադասում է ընկեր դիմելաձևը: Լինելով հետխորհրդային շրջանի սերունդ, նրանք պետք է որ հեռու լինեին խորհրդային շրջանին բնորոշ այդ անդեմ դիմելաձևից, սակայն, որքան էլ որ տարօրինակ է իներցիայի ուժով, թե ժառանգական մտածողությամբ թելադրված ոճով շարունակում են դասախոսական անձնակազմին դիմել այդ ձևով: Առօրյա կենցաղում ևս հանդիպում են շատ դեպքեր, երբ տարեկից մարդիկ դիմում են իրար այդ ձևով՝ սեռականության շեշտադրմամբ, ինչպես օրինակ՝ ա՛յ ընկեր կամ ա՛յ ընկերուհի և կամ ընկեր ջան ձևերով: Արդի հասարակության մեջ կանայք իրենց հասակակից կանանց դիմում են թե տիկին և թե ընկերուհի ձևով: Տղամարդկանց դիմում են ընկեր կամ եղբայր ձևերով: Հանդիպում են և անանուն դիմելաձևեր:

Ներկայիս կենցաղում երևանյան բազմաշերտ հասարակության մեջ երիտասարդ տղաների միջավայրում շատ ավելի հաճախադեպ է դարձել կանանց մորքուր, տղամարդկանց հոպար կամ ձյաձ դիմելաձևը: Հարկ է նշել, որ վերջինս հոպար-հորեղբայրի ռուսերենի (հայացված) տարբերակն է:

Այս առումով ուշագրավ է, որ խորհրդային շրջանում տարածված տյոտյան թարգմանվեց հայերեն ու կայունացավ մորքուր ձևակերպմամբ՝ հետ մղելով մայրիկ բառը, իսկ ձյաձ-հոպար-ը զուգահեռ գործածմամբ շարունակում է կիրառվել: Ընդ որում, եթե տվյալ տղամարդը մոտ կամ ծանոթ մարդ է ձյաձ դիմելաձևը գործածվում է հատուկ անվան հավելմամբ, ինչպես օրինակ՝ ձյաձ Հակոբ, կամ հակառակը, եթե օտար է, դիմում են առանց հատուկ անվան հավելման: Նույնը կարելի է ասել և մորքուր դիմելաձևի պարագայում:

Տղամարդիկ տարեկից կնոջը դիմելիս օգտագործում են տիկին, քույրիկ կամ ընկերուհի դիմելաձևով, իսկ տղամարդկանց դիմում են եղբայր կամ ախպեր բառերով: Նույնկերպ

և հասակակից անծանոթ տղամարդիկ (ավագ տարիքային խմբի) միմյանց դիմում են անդեմ, կամ հազվադեպ եղբայր-ախպեր դիմելաձևով:

Արյունակցական միջավայրից ծագում առնող եղբայր բառը արտասանությամբ, երանգավորմամբ և իմաստավորմամբ ամենից հարուստն է գրեթե բոլոր ժամանակների դիմելաձևերում և տղամարդկանց տարբեր տարիքային խմբերում: Այն հորջորջվում է՝ ախպեր /ախպար/, ապեր, ապե, ապ նաև՝ ախպեր-ընկեր համադրությամբ: Հարկ է նշել, որ եթե ավագ խմբի տղամարդը կարող է որևէ երիտասարդի դիմել ապեր ձևով, ապա նույնը չի կարող իրեն թույլ տալ երիտասարդը՝ ավագի հանդեպ:

Սրանից կարելի է եզրակացնել, որ ապեր դիմելաձևը երիտասարդական տարիքի բնորոշում է, կամ այդ տարիքի մարդկանց բնորոշող: Հարկ է նշել նաև, որ ապեր ձևը առավելապես քաղաքային միջավայրին է բնորոշ, քանի որ շրջաններում կիրառելի է ախպեր ձևը՝ ի տարբերություն արևմտահայերենի ախպար ձևի, որը ժամանակին խորթ թվալով արևելահայերին, այնքան ընդարձակվեց իմաստային ընկալման մեջ, որ պարզ դիմելաձևից վերածվեց սուբէթնոնիմի(2): Այդ է փաստում այն պարագան, որ եթե ախպար ձևով արևմտահայը դիմում էր միայն տղամարդուն, ապա արևելահայերը սկսեցին այդպես խոսել նաև կանանց մասին:

Ախպեր դիմելաձևը ներկայումս ձեռք է բերել առավել ընդհանրացնող իմաստ: Վերջինից են ածանցվել ախպերություն–ընկերություն հավաքականություն արտահայտող բառերը, որոնք շատ են օգտագործվում հարազատ-մտերիմների միջավայրում:

Նշված դիմելաձևին գրեթե զուգահեռ տղամարդկանց միջավայրում գործածելի է և արա դիմելաձևը, որը նույնպես ունի նրբերանգային սահմանափակումներ կամ առանձնահատկություններ: Այն սովորաբար օգտագործում են հատուկ անվան համադրությամբ, այլապես այն կընկալվի իբրև վիրավորական, ստորացուցիչ դիմելաձև և առիթ կհանդիսանա լուրջ միջադեպերի: Այս պարագայում նույնպես գործում է տարիքային սանդղակը. Ավագը կարող է այդկերպ դիմել իրենից կրտսերին,

սակայն հակառակը՝ բացառվում է: Հայտնի է նաև արան, հայոց մեջ միաժամանակ նաև տղամարդու հատուկ անուն է: Այդ դեպքում, այս համադրության մեջ հանդես է գալիս նաև հատուկ անունը՝ օր. արա Արո ձևով: Այս դիմելաձևը նույնպես առավելապես բնորոշ է Երևանին ու շրջակայքին: Կարելի է ասել այն երևանյան դիմելաձև է, և այդ ձևով դիմողը իսկույն մատնում է իր ինքնությունը:

Երիտասարդ տղաները տարեկից աղջիկներին դիմում են քույրիկ, քուր ջան, քուրո ձևերով, որն ունի նաև մտերիմ, յուրային համարվելու նշանակություն մեր քուրն ա արտահայտությունը խոսում է մտերիմ, յուրային համարելու աստիճանի մասին: Իրեն սոցիալական ծագումով բարձր համարող երիտասարդը հասակակից աղջկան դիմում է ընկերուհի ձևով կամ անանուն, ինչպես աղջիկներն են դա անում տղաների նկատմամբ: Աղջիկները դիմում են անունով՝ ծանոթի պարագայում կամ ավելի հաճախ անանուն:

Անանուն դիմելաձևերում, խոսքը վերբալ դարձնելու համար մարդիկ տարբեր տարիքային խմբերում դիմում են չեզոք դիմելաձևերի, ինչպես օրինակ՝ կներեք, կարելի է, չէի՞ք ասի, կոնկրետություն չպարունակող արտահայտությունները, որոնք քաղաքավարական դիմելաձևեր են համարվում:

Երևանաբնակների դիմելաձևերում հաճախ լսելի է վարպետ բառը, որն առավելապես օգտագործվում է տաքսի ծառայության վարորդների նկատմամբ, թեպետև վարպետը բնութագրիչն է որևէ արհեստավորի:

Հանդիպում է և ուստա դիմելաձևը, որը նունյպես և նախորդի դեպքում՝ մտերմություն չի մատնանշում:

Ինչպես նկատեցինք, ժամանակակից դիմելաձևերը շատ չեն հեռացել ավանդական արմատներից: Դրանք բոլորն ի վերջո գալիս են ազգակցական անվանումներից, ինչը բնորոշ է և այլ ժողովուրդների: Այլ հարց է, թե դրանք ինչ մերձեցումների են տանում հասարակության տարբեր խմբերին:

Դիմելաձևերը յուրաքանչյուր հասարակության մեջ մարդկանց և առանձին խմբերի փոխադարձ հարաբերությունների ձևավորման ու կարգավորման մեխանիզմի

բաղադրիչ տարրն են: Դրանք պայմանավորված են և արտացոլում են հասարակության զարգացման փուլերը:

ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Հայտնի է, որ ամբողջ աշխարհում խոսքի և հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների թիվը գնալով ավելանում է՝ կենդանի շփման պակասի, թվային տեխնոլոգիաների՝ երեխայի կենցաղ մտնելու, ընտանիքներում առկա լարված վիճակի, էկոլոգիական, ֆիզիոլոգիական և այլ խնդիրների պատճառով [ASHA- Social Communication Disorders]: 21-րդ դարում հատկապես կարևորվում է շփումն ու հաղորդակցումը՝ տեղեկատվության ձեռքբերման, մտքերի ու փորձի փոխանակման և այլ առումներով: Սակայն խոսքի խանգարումներ ունեցող անձանց համար այս հարցը մշտապես ակտուալ է, քանի որ այս անձինք ունեն թե՛ շփման, թե՛ վերբալ ու ոչ վերբալ հաղորդակցման տարբեր խնդիրներ: Սոցիալապես ակտիվ անձնավորության ձևավորման կարևորությունն արտահայտվել է մի շարք այնպիսի ականավոր մանկավարժների աշխատություններում, ինչպիսիք են Յ. Ա. Կոմենսկին, Ժ.-Ժ. Ռուսոն, Ա. Դիստերվերգը, Կ. Դ. Ուշինսկին, Վ. Ն. Շուլգինան և այլք [9]: Մինչ նախադպրոցականների սոցիալական ակտիվության ձևավորման խնդրին անցնելը հարկավոր է հասկանալ՝ ինչպիսի անձնային որակներ է ենթադրում սոցիալապես ակտիվ մարդը: Այն ներառում է բազմաթիվ հատկանիշներ, ինչպիսիք են պատասխանատվությունը, ինքնուրույնությունը, բարոյականությունը և այլ նմանատիպ որակների համադրությունը: Երեխաների գործունեությունն ու անկախությունը ամբողջ դիդակտիկ համակարգի հիմնական սկզբունքներից մեկն է. «Ուսուցչի խնդիրն այն է, որ սովորողները պատրաստի, արդեն լուծում ստացած խնդիրներ չուսումնասիրեն, այլ ուղղեն իրենց մտավոր գործունեությունը դրանց լուծմանը» [7]: Մեր ուսումնասիրության նպատակն է՝ 1. վերլուծել սոցիալական հաղորդակցման հմտությունների զարգացումը նորմայում և լոգոպեդիայի տեսանկյունից, 2. պարզել նախադպրոցահասակների և կրտսեր դպրոցում սովորողների սոցիալական հաղորդակցման էությունը, 3. որոշել սոցիալական հաղորդակցման հմտությունների ձևավորմանն ուղղված աշխատանքների բնույթը լոգոպեդական աշխատանքների ընթացքում: Վերոնշյալ նպատակների համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝ 1. ուսումնասիրել սոցիալական

հաղորդակցման վերաբերյալ մասնագիտական գրականություն, 2. ծանոթանալ սոցիալական հաղորդակցման խանգարումների հետազոտման մեթոդիկաներին և հնարավոր շտկման եղանակներին: Մեր ուսումնասիրությունների համար կիրառվել է մեթոդների հետևյալ գործիքակազմը՝ զրույց, դիտում, հարցազրույց, հարցաթերթիկային հարցում: «Հաղորդակցում» տերմինը, ըստ Harper Douglas: «communication»: Online Etymology Dictionary աղբյուրի, ծագել է լատիներեն «communico» բառից, որը նշանակում է դարձնում եմ ընդհանուր, կապում եմ, շփվում եմ: Հաղորդակցման նպատակը տեղեկատվության փոխանցումն է, որը կարող է կատարվել զանազան ձևերով [12]: Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով (ժեստեր), դեմքի արտահայտություններով, խոսքով, մամուլի կամ էլեկտրոնային փոստի հաղորդագրություններով, հեռախոսով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլ եղանակներով: Հենց այս աղբյուրներից են երեխաները լսում, տեսնում և վերցնում տեղեկատվությունը, որոշակի բառապաշարով, քերականական ճիշտ կառույցով և կապակցված խոսքով փոխանցում շրջապատին: Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների (անձ, սոցիալական խումբ) փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում [10, 11]: Իսկ ի՞նչ է նշանակում կարողանալ հաղորդակցվել: Դա նշանակում է կարողանալ ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները և, դրա հիման վրա օգտագործելով հաղորդակցման հոգեբանական ունակությունները, նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել [1]: Դեռևս նախադպրոցական տարիքից լոգոպեդական աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը երեխաների մոտ հաղորդակցման հմտությունների զարգացումն է: Հաղորդակցման հմտությունները ենթադրում են երեխայի արագ կողմորոշումը տարբեր իրավիճակներում, վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման միջոցների ազատ կիրառումը: Մեր պրակտիկ փորձի ընթացքում հաճախ ենք հանդիպում երեխաների, որոնց ընտանիքներում չի կարևորվում երեխայի հաղորդակցման սոցիալական

կարողությունների զարգացումը: Սա մեզ թույլ է տալիս ևս մեկ անգամ հիմնավորել Լ. Ս. Վիգոտսկու այն միտքը, ըստ որի՝ երեխայի խոսքը ձևավորվում է սոցիալական շփման մեջ, ակտիվ խոսքային միջավայրում: Այս պարագայում լոգոպեդական աշխատանքում շեշտը պետք է դնել երեխայի հոգեբանական պաշտպանվածության, նրա հարմարավետության, հասակակիցների հետ հուզական շփում ստեղծելու անհրաժեշտության վրա: Լոգոպեդական աշխատանքի ուսումնական գործընթացում հաղորդակցման հմտությունների զարգացման համար նպատակահարմար է բառապաշարի հարստացումը զգացմունքներ և հույզեր ցույց տվող բառերով: Սոցիալական հաղորդակցումը, բանավոր խոսքը, գրավոր խոսքը ունեն բարդ փոխներգործություն: Սոցիալական հաղորդակցման հմտությունները հարկավոր են լեզվի արտահայտման ու ընկալման համար և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքում: Գրավոր և բանավոր խոսքի կիրառման հմտությունները թույլ են տալիս արդյունավետ հաղորդակցվել տարբեր սոցիալական կոնտեքստներում, տարբեր նպատակներով [10]: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել հատկապես մեր օրերում, երբ գրավոր խոսքի միջոցով հաղորդակցումն առավել արդիական է դառնում: Սոցիալական հաղորդակցման վարքային այնպիսի դրսևորումները, ինչպիսիք են տեսողական կոնտակտը, դեմքի միմիկայի փոփոխությունները, մարմնի լեզուն, ժեստերը պայմանավորված են սոցիալ-մշակութային և անհատական գործոններով [Curenton & Justice, 2004; Inglebret, Jones, & Pavel, 2008]: Վերոնշյալի համար գոյություն ունի ընդունված նորմերի լայն շրջանակ՝ կախված տվյալ անձի անհատական առանձնահատկություններից, ընտանիքից և, իհարկե, ազգային պատկանելիությունից: Ըստ Ամերիկայի Խոսքի և լսողության ասոցիացիայի՝ սոցիալական հաղորդակցման խանգարումները բնութագրվում են սոցիալական նպատակներով օգտագործվող վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման դժվարություններով: Սոցիալական հաղորդակցման խնդիրներ չկան, երբ անձը՝

1. Հաղորդակցվում է որևէ սոցիալական նպատակով, որը հատուկ է կոնկրետ սոցիալական իրավիճակի:

2. Փոխում է հաղորդակցման ձևը, որպեսզի համապատասխանի լսողի «կարիքներին»:

3. Հետևում է երկխոսության և մենախոսության կանոններին:

4. Հասկանում է ենթատեքստը կամ երկիմաստ խոսքը:

5. Հասկանում է, թե ինչի մասին է խոսքը, նույնիսկ երբ դա ակնհայտորեն չի շեշտվում դիմացինի խոսքում: Սոցիալական հաղորդակցման խանգարումը կարող է հանգեցնել հեռահար խնդիրների՝ սոցիալական դիրքը գտնելու, ընկերների հետ փոխհարաբերությունների, ակադեմիական հաջողությունների հասնելու, աշխատանքում հաջողությունների հասնելու դժվարությունների: Այս ամենը կարևորվում է խոսքի զարգացման փուլում գտնող երեխաների սոցիալական հաղորդակցման զարգացմանը նպաստելու տեսանկյունից: Սոցիալական հմտությունների ձևավորումը սկսվում է դեռևս նորածնային շրջանից, երբ երեխան սկսում է ճանաչել իրեն շրջապատող աշխարհը: Ինչպես նշում է Ամերիկայի Խոսքի և լսողության ասոցիացիան, սոցիալական հաղորդակցման խանգարումները կարող են հանդես գալ որպես առանձին խանգարում կամ լինել այլ խնդիրների հետ զուգակցված՝

1. մտավոր հետամնացություն,

2. զարգացման խանգարումներ,

3. սովորելու կարողության խանգարումներ,

4. բանավոր խոսքի խանգարումներ,

5. գրավոր խոսքի խանգարումներ,

6. ուշադրության դեֆիցիտ և հիպերակտիվության խանգարում,

7. գլխուղեղի տրավմաներ (մանկական և հասուն տարիքում),

8. աֆազիա,

9. թուլամտություն,

10. գլխուղեղի աջ կիսագնդի վնասվածքներ: Աուտիստիկ սպեկտրի խանգարումները զարգացման խանգարումների լայն սպեկտր են, որոնց դեպքում նկատվում են սոցիալ-հաղորդակցական հմտությունների անբավարարություն, սահմանափակ հետաքրքրությունների շրջանակ, կրկնվող գործողություններ [11]: Այն արտահայտվում

է այս երեխաների զգալի առանձնահատկություններով, սակայն հիմնական դեր են խաղում սոցիալիզացիայի և հաղորդակցման հմտությունների խանգարումները: Աուտիստիկ սպեկտրի խանգարումների դեպքում սոցիալական հաղորդակցման խանգարումներն ունենում են զգալի առանձնահատկություններ, որոնք ուղեկցվում են սահմանափակ, ստերիոտիպ, կրկնվող վարքագծով: Այսպիսով, սոցիալական հաղորդակցման խանգարումը կարող է ախտորոշվել նաև աուտիստիկ սպեկտրի խանգարումների համատեքստում [8]: Գոյություն ունեն որոշակի կանոններ, որոնց մենք հետևում ենք խոսելու ընթացքում՝ կախված նրանից, թե ինչ իրավիճակում ենք և ում հետ ենք խոսում: Ակտիվ սոցիալական դիրքորոշումը առավել ակնհայտ է նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական գործունեության մեջ: Սոցիալական հաղորդակցության կանոններից օգտվելու խնդիրներ կարող են ունենալ և՛ մեծահասկաները, և՛ երեխաները: Ներկայացնենք մի իրավիճակ, երբ Դուք Ձեր ընկերոջը հրավիրել եք ընթրիքի: Ձեր երեխան, տեսնելով, թե ինչպես է նա փորձում թխվածքաբլիթներ վերցնել, ասում է. «Ավելի լավ կլինի չուտեք դա, այլապես ավելի կգիրանաք»: Ձեր հավատը չի գալիս, որ նա կարող էր նման բան ասել: Կամ մեկ այլ իրավիճակ. Դուք խոսում եք հարևանի հետ իր նոր մեքենայի մասին: Նա դժվարանում է շարունակել խոսակցությունը և անդադար շեղվում է թեմայից և խոսում իր սիրելի հեռուստածրագրի մասին: Նա չի նայում Ձեզ խոսելիս և նույնիսկ չի ծիծաղում Ձեր կատակների վրա: Նա շարունակում է խոսել նույնիսկ այն ժամանակ, երբ Դուք նայում եք ժամացույցին և հիշեցնում, որ արդեն ուշ է: Վերջապես Դուք հեռանում եք՝ մտածելով, թե որքան դժվար է նրա հետ խոսելը: Եվ՛ Ձեր երեխան, և՛ Ձեր հարևանը լավ են խոսում: Բանն այն է, որ նրանք ունեն սոցիալական հաղորդակցման, սոցիալական կարողությունների տիրապետման խնդիրներ: Այս և բազմաթիվ այլ օրինակներ երբեմն թյուրիմացության պատճառ են դառնում: Այսպիսի խանգարումները շփոթվում են մտավոր, հոգեկան և այլն նմանօրինակ խնդիրների հետ, այնինչ խնդիրը հաղորդակցման հմտությունների անբավարարությունն է, որը պահանջում է համակողմանի շտկողական աշխատանք լոգոպեդի և 420 հոգեբանի մասնակցությամբ:

Գրականության մեջ առանձնացված է սոցիալական հաղորդակցման հմտությունների 3 հիմնական խումբ: Լեզվի գործածությունը տարբեր նպատակներով՝

• Ողջունելու համար. «Բարև, «ցտեսություն»:

• Տեղեկացնելու նպատակով. «Ես այսօր թատրոն եմ գնալու»:

• Պահանջելու. «Ջու՛ր տուր ինձ»:

• Պլանավորելու.«Ես գնալու եմ քեզ համար թխվածք գնելու»:

• Խնդրանքով դիմելու. «Խնդրում եմ, ինձ ջուր տուր»: Խոսակցական ոճը փոփոխելը կախված իրավիճակից և խոսակցից՝

• երեխայի և մեծահասակի հետ,

• տվյալ թեմային անտեղյակ և քաջատեղյակ մարդու,

• տանը, դասարանում և խաղահրապարակում: Որոշակի կանոներին հետևելը երկխոսության և որևէ բան պատմելու ընթացքում.

• Իմանալ, թե երբ է պետք խոսել, սպասելը քո հերթին:

• Ներկաներին ներկայացնելը, թե ինչի մասին եք խոսելու:

• Թեմայից չշեղվելը:

• Եթե որևէ մեկը չի հասկանում Ձեզ, ապա նույն միտքը այլ կերպ ձևակերպելը:

• Խոսելիս ժեստերի և մարմնի լեզվի օգտագործումը:

• Զրուցակիցների միջև որոշակի հեռավորության պահպանումը:

• Միմիկայի և տեսողական կոնտակտի պահպանումը: Իհարկե, այս կանոնները տարբեր մշակույթների դեպքում տարբեր են: Այն մարդիկ, ովքեր հաղորդակցման խնդիրներ ունեն, կարող են՝

• Խոսելիս սխալ արտահայտություններ անել կամ անհամապատասխան վարք դրսևորել: Օրինակ՝ ծիծաղել խոսելիս կամ սկսել խոսել մեկ այլ բանի վերաբերյալ:

• Պատմել թեմային չառնչվող կամ անիմաստ պատմություններ:

• Խոսքը սահմանափակ օգտագործել, խոսակցությունը սկսել առանց բարևելու, շնորհակալություն չհայտնել, միայն ասել այն, ինչ ուզում են:

Ըստ Ի. Մ. Կորոտկովի՝ երեխայի սոցիալական հաղորդակցման պահանջմունքների ձևավորումը կարելի է ներկայացնել 4 հիմնական փուլերով. մեծահասակի նկատմամբ երեխայի ուշադրության և հետաքրքրության ի հայտ գալը պայմանավորված է.

1. Մեծահասակի նկատմամբ երեխայի էմոցիոնալ դրսևորումների արտահայտմամբ:

2.Երեխայի կողմից նախաձեռնողական գործողությունները մեծահասկի ուշադրությունը գրավելով:

3. Մեծահասակի վերաբերմունքի և գնահատականի նպատմամբ երեխայի զգայունությամբ:

4. Մեծահասակի վերաբերմունքի և գնահատականի նպատմամբ երեխայի զգայունությունը:

Կյանքի առաջին տարվա վերջում երեխաներն իրենց հասկակիցների հետ շփվելու մեծ ցանկություն ունեն, նրանք սիրում են լինել այլ երեխաների միջավայրում, չնայած դեռ չեն խաղում: Կյանքի երկրորդ տարվանից սկսած՝ հասակակիցների հետ շփումը ընդլայնվում է, և 4-ամյա երեխայի համար դա դառնում է առաջատար կարիքներից մեկը: Միևնույն ժամանակ նրանց ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունն աճում են, այսինքն՝ վարքը դառնում է ավելի նպատակաուղղված [4]: Երեխայի հաղորդակցման կարիքի հիման վրա առաջանում է՝ ճանաչման անհրաժեշտություն և դրա զարգացում (առաջին հերթին չափահասներից և հետո իր հասակակիցներից), որոնք աստիճանաբար բացահայտում են երեխայի ճանաչողական ոլորտի հնարավորությունները: Ինչպես նշում է Վ. Ս. Մուխինան, հաղորդակցման ոլորտում կարևոր նշանակություն ունի զարգացման գործընթացում ձեռք բերված ճանաչողական գործընթացների անհրաժեշտությունը, որը որոշում է անձի զարգացման դրական ընթացքը: Այն սովորեցնում է երեխային ձգտել հասնելու այն ամենին, ինչը կարևոր է այն մշակույթի մեջ, որին երեխան պատկանում է [5]: Ռուս հայտնի հոգեբաններ, Լ. Ս. Վիգոտսկու աշակերտներ Լ. Ի. Բոժովիչի և Լ. Ս. Սլավինայի հետազոտությունն ապացուցում է, որ ավագ նախադպրոցականների և շրջապատող իրականության միջև հարաբերությունների բազմազանությունը որոշվում է սոցիալական շարժառիթներով,

որոնք ստեղծվել են երեխաների և շրջապատող իրականության միջև գոյություն ունեցող հարաբերությունների ամբողջ համակարգով: Այս սոցիալական շարժառիթները հիմնականում կախված են ընտանիքից, երեխայի կյանքի հանգամանքներից, դպրոցում նրա դիրքի, դպրոցի նկատմամբ իր ներքին վերաբերմունքից, նրանք ներառում են այն ձգտումները, երեխայի կարիքները, որոնք ծագում են կյանքի բոլոր հանգամանքներից և կապված են անձի հիմնական կողմնորոշման հետ [7]:

Մասնագիտական գրականության մեջ հաղորդակցումը համարվում է շփման ընթացքում արագ և ճշգրիտ կողմնորոշման ունակություն, որը հիմնված է անհատի հաղորդակցական փորձի վրա: Հաղորդակցությունը կարևոր բաղադրիչ է, որը բաղկացած է երեխայի խոսքը հասկանալի դարձնելու և ուրիշների ելույթը հասկանալու պատրաստակամության մեջ [2]: Խոսքի խանգարումներ ունեցող երեխաների խոսքային ակտիվության մակարդակը ցածր է, որն իր հերթին խոչընդոտում է մտածողական և ճանաչողական գործընթացների զարգացմանը, բացասաբար է ազդում անհատական զարգացման և նախադպրոցահասկաների վարքի վրա: Այս ամենը յուրովի բարդացնում է հաղորդակցման հմտությունների ձևավորումը: Մարդկանց հաղորդակցման հմտությունների ձեռքբերման մի քանի հիմնական աղբյուրներ կան՝ կյանքի փորձը, արվեստը, ընդհանուր կրթական մակարդակը և հատուկ գիտական մեթոդներ [3, 4, 6]: Երեխաների սոցիալական հաղորդակցման հիմնախնդիրը լոգոպեդիայի տեսանկյունից բազմիցս ուսումնասիրել են բազմաթիվ հոգեբաններ՝ Լ. Բոժովիչ, Ի. Կոն, Լ. Ս. Վիգոտսկի, Դ. Ֆելդշտեյն, Դ. Բ. Էլկոնին, Ժ. Պիաժե,Կ. Լևին, Շ. Բյուլեր և այլք: Նրանցից շատերի կարծիքով՝ երեխայի հետագա սոցիալականացման և ժամանակակից հասարակությանն ինտեգրվելու գործընթացը մեծապես կախված է վերջինիս հաղորդակցական ոլորտի զարգացման արդյունքներից: Գրեթե բոլոր հոգեբանները համակարծիք են, որ հաղորդակցումն անգնահատելի դեր ունի երեխայի անձի զարգացման գործում, ուստի և սկզբունքորեն կարևոր է դառնում վերջինիս առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Հաշվի առնելով սոցիալական հաղորդակցման կարևորությունը, գրականության տվյալների ուսումնասիրությունը և

մեր պրակտիկ փորձը՝ ստորև ներկայացված են լոգոպեդների, խոսքի խանգարումներ ունեցող երեխաների ծնողների և տարրական դասարաններում սովորողների շրջանում մեր կողմից անցկացված ուսումնասիրությունների և հարցման արդյունքները:

Հարցմանը մասնակցել են ընդհանուր թվով 70 մարդ՝ լոգոպեդ և ծնող: Հարցման մասնակիցները 18-32 տարեկան և բարձր տարիքային խմբին պատկանող անձինք են, որոնց 47 % գործող մասնագետներ են, 33 %-ը և՛ ուսանող և՛ աշխատող, 13 %-ը մասնագիտական կրթություն ունեցող, սակայն չաշխատող մասնագետներ են: Ստորև բերված 423 տրամագրում սոցիալական հաղորդակցման վերաբերյալ հարցման մասնակիցների մեկնաբանություններն են, որում մասնակիցների 81, 4%-ը հաղորդակցման հոգեբանական ձևակերպում է տվել:



Տրամագիր 1. Սոցիալական հաղորդակցման վերաբերյալ հարցման մասնակիցների մեկնաբանությունները տոկոսային հարաբերությամբ:

Տարրական դասարաններում սովորողների (թվով 70) 56,3%-ը տղաներ են, իսկ 43,7%-ը՝ աղջիկներ: Նրանց 73,2%-ը նշել է, որ հեշտությամբ է շփվում դասընկերների հետ և ունի շատ ընկերներ, որոնց հետ հիմանականում ծանոթացել է դպրոցում: Մեր կողմից անցկացված հարցման շրջանակներում առաջարկվեցին որոշակի տրամադրություններ նշանակող նկարներ. երեխաները պետք է ընտրեին իրենց այդ պահին դուրեկած տրամադրությունն արտահայտող նկարը և զուգորդումներ անեին իրենց սեփական տրամադրությունների ու զգացումների հետ: Նրանց 49,3% -ը նշել է, որ



լինում են դեպքեր, երբ սեփական մտքերը, իրենց զգացածը, տեսածը, լսածը այնքան էլ լավ չի ստացվում արտահայտել:

Տրամագիր 2. Հարցված երեխաների ինքնարտահայտման մակարդակը տոկոսային հարաբերությամբ:

Հիմնականում նշել են, թե երբ են նման դժվարություններ ունենում. դասերի ժամանակ մոռանում են, թե ինչի մասին էին խոսում, ուսուցիչների հետ խոսելիս, խաղալիս, հարցերին պատասխանելիս, երբ որոևէ բան են ուզում անել, բայց դժվարանում են բացատրել ու համոզել ծնողներին, անծանոթ մարդկանց հետ խոսելիս և այլն: Հարցման արդյունքները հուսադրող էին մինչ այն պահը, երբ պարզ դարձավ, որ նախադպրոցահասակների 59,2%-ը ազատ ժամանակ գերադասում է խաղալ հեռախոսով կամ համակարգչով՝ հետին պլան թողնելով բակային խաղերը ընկերների հետ: Նրանց միայն 19,7%–ն է պատրաստ սեփական նախաձեռնությամբ ծանոթություն հաստատել նոր մարդկանց հետ: Այսպիսով, վերլուծելով ուսումնասիրության

արդյունքները, կարող են նշել, որ մասնակիցների հիմնական մասը՝ գրեթե 67.6 %, հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ նրանց հաղորդակցման հմտությունները բավարար չեն եղել արդյունավետ հաղորդակցման համար: Նրանց 88,7%-ը նշում է, որ ճանաչում են, գիտեն մարդկանց, ովքեր ունեն սոցիալական հաղորդակցման խնդիրներ: Հարցվածների 45,7%-ը նախընտրում է կենդանի շփումը, սակայն նրանցից շատերը օրվա ընթացքում 2-4 ժամ անցկացնում են համացանցում և դժվարանում են պատասխանել այն հարցին, թե որքան ժամանակ են տրամադրում կենդանի շփմանը: Նրանց 71,4%-ը նշում է նաև, որ թվային տեխնոլոգիաների հաճախակի օգտագործումը բացասական ազդեցություն է թողնում հաղորդակցման հմտությունների վրա: Հարցվածների 70%-ը կարծում է, որ երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված նպատակաուղղված աշխատանքի կարիք կա: Այս հարցը միշտ հրատապ է նաև երեխայի խոսքի զարգացման որակի և ժամկետի տեսանկյունից: Երբ լոգոպեդի և խոսքի զարգացման խանգարում ունեցող երեխայի ծնողի զրույցից պարզ է դառնում, որ երեխան օրվա մեծ մասն անցկացնում է էկրանի առջև, ունի խոսքի զարգացման խանգարում ոչ միայն հնչարտաբերման ու բառապաշարի մակարդակում, այլև խոսքի քերականական կառույցի, կապակցված խոսքի մակարդակում, և ծնողի կողմից չի կարևորվում երեխայի հետ կենդանի շփումը, այլ էկրանը դիտվում է որպես արագ սովորելու լավ միջոց: Սակայն սա թույլ է տալիս եզրակացնել, որ որքան էլ 21-րդ դարում տեխնոլոգիական միջոցները մեծ տեղ են գրավում մեր կյանքում, այնուամենայնիվ, խոսքը, խոսքային հաղորդակցումը, մարդու 425 մեծագույն ձեռքբերումն է որպես մտածողության գործիք և ճանաչական ոլորտի զարգացման միջոց: Հարկ է նշել, որ սոցիալական հաղորդակցման հմտությունների խանգարումներ կարող են դիտվել ինչպես նորմալ զարգացում ունեցող, այնպես էլ զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների մոտ: Այդ է պատճառը, որ դեռևս նախադպրոցական տարիքից անհրաժեշտ է նպատակաուղղված կերպով զարգացնել երեխաների սոցիալական հաղորդակցման կարողությունները, ինչի մասին նշում են նաև հարցման մեծահասակ մասնակիցները: Կանխարգելիչ և շտկողական

լոգոպեդական աշխատանքների կարևորությունը ակնհայտ է հատկապես մեր օրերում, երբ թվային տեխնոլոգիակաները մեր առօրյա կյանքում առավել կիրառելի են դարձել, քան մարդկային կենդանի շփումը ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների շրջանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով մեր խոսքը, նշենք, որ հաղորդակցական ունակությունները կամ հաղորդունակությունները անձի այն հատկությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն ձևակերպում է իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում և ընդունում՝ ճշտորեն վերծանելով դրանք, ապահովելով պատշաճ հետադարձ կապը:

Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների (անձ, սոցիալական խումբ) փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակություն: Որպես հաղորդակցման սուբյեկտ հանդես են գալիս ինչպես անհատներ, այնպես էլ խմբեր: Հաղորդակցությունը վերահսկում է հասարակական կյանքի բոլոր կողմերը, մարդականց, սոցիալական խմբերին: Մարդը ապրում է ինֆորմացիոն դարաշրջանում՝ հաղորդակցության տարածման մեջ, որը կազմված է տարբեր պատկերներից, իմիջից, հաղորդագրություններից, սիմվոլներից, միֆերից, կարծրատիպերից: Նույնիսկ առաջացել է «տեղեկացված մարդ» տերմինը. նրա համար հմտություն է ստանալ, մշակել և փոխանցել տեղեկատվությունը: Հաղորդակցությունը կայանում է ոչ միայն մարդկանց միջև տեղեկատվության փոխանցմամբ, այլ նաև անձի ինքնորոշմամբ: Հաղորդակցությունը և՛ հաղորդագրության ուղի է, և՛ կապի տեսակ է, և՛ հաղորդագրության գործողություն է, ինչպես նաև տեղեկատվության հաղորդումն է տեխնիկական միջոցների օգնությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Տ., Հաղորդակցման և աշխատանքային գործունեության հիմանական հմտություններ: Երևան: ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն: 2012: էջ 10-34: 256 էջ:
2. Емельянов Ю. Н. Теория формирования и практика совершенствования коммуникативной компетентности. М.: Просвещение. 1995. 113 с.
3. Калягин В. А. Логопсихология: учеб. пос. для студ. высш. учеб. заведений. В. А. Калягин, Т. С. Овчинникова. М.: Академия. 2006. 320 с.
4. Коротков И. М. Подвижные игры : учеб. пособие для студентоввузов и ссуз физической культуры. И. М. Коротков, Л. В. Былеева. М.: СпортАкадемПресс. 2002. 40 с.
5. Павлова О. С. Нарушение коммуникативного акта у детей с общим недоразвитием речи: Психолингвистика и современная логопедия/ О. С. Павлова. М. 1998. 213 с.
6. Сергеенко А. В. Социально-коммуникативная компетентность у дошкольников с общим недоразвитием речи //Специальное образование. 2017. Т. 2. URL: https://cyberleninka.ru/article/n/sotsialno- kommunikativnaya-kompetentnost-u-doshkolnikov-s-obschim-nedorazvitiem- rechi.pdf.
7. Соловьева Л. Г. Особенности коммуникативной деятельности детей с общим недоразвитием речи.// Дефектология. 1996. № 1. С. 62–67.